

Հաջիե Ջեզի

Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅԸ ՔՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քուրդ ժողովրդի կյանքով ոչ միայն ողու գիտնականներն են զբաղվել¹, այլև ողու նշանավոր գրողները: Քուրդ ժողովրդի նկատմամբ առանձին հետաքրքրություն են հանդես բերել Ա. Ս. Պուշկինը, Ա. Ս. Գրիբոեդովը, Ե. Յու. Լերմոնտովը, Լ. Ն. Տոլստոյը և ուրիշներ:

Ա. Ս. Պուշկինը, երբ ուղևորվում էր Արդրում, հանդիպելով թե անդրկովկասյան մարզերի ժողովուրդներին և թե նոր նվաճված երկրների բնակիչներին, շատ է հետաքրքրվում եզիդի քրդերի կենցաղով, հավատալիքներով, կրոնով²: Նա անձամբ զրուցում է նրանց «պետի» հետ և ուրախանում, որ իր նախապես կարդացած ոչ ճիշտ տեղեկություններն այդ ժողովրդի սնոտիապաշտությունների մասին, չեն համապատասխանում իրականությանը:

Նա, միաժամանակ, ֆրանսերենից թարգմանել տալով քրդերեն լեզվի առաջին քերականության հեղինակ իտալացի Մորիս Դարձոնի հետաքրքիր տեղեկությունները եզիդի քրդերի մասին, գրված 1787 թ., մտադրվել էր դրանք կցել իր հայտնի «Ճանապարհորդություն դեպի Արդրում» գրքին՝ որպես հավելված ողու բնիկներին մահմեդականների կողմից հալածվող փոքր ժողովուրդներից մեկի հերոսական դրվագների, վարք ու բարքի և ապրելակերպի հետ ծանոթացնելու նպատակով:

Ա. Գրիբոեդովը 1827 թ. մեկնելով Իրան, իր «Ճանապարհորդական նոթեր»-ի մեջ խոսում է քրդական «սահակցի» և «միլլի» ցեղերի մասին, որոնց մեջ «պրոկլամացիա» էին տարածում ողու ազատարար զինվորները³: Այնուհետև նա հիշատակում է, թե ինչպես քրդական «շարուլցիք» և «միլլի» ցեղերն իրենց անասուններով գալիս էին ողուների կողմը, Ա. Ս. Պուշկինի նկարագրած եզիդի քրդերի նման սիրով իրենց հպատակությունը հայտնելով ողուական պետությանը:

Ոչ պակաս հետաքրքրություն է հանդես բերել դեպի քրդերը Մ. Յու. Լերմոնտովը: Ինչպես երևում է, նա նույնպես անձամբ հանդիպել է քրդերի հետ: Ներկայումս Հայկական ՍՍՌ Պետական թանգարանի գրական արխիվումն է գտնվում նրա կողմից նկարված մի քուրդ տղամարդու պատկեր:

Ողու մեծահոշակ գրողներից քուրդ ժողովրդի նկատմամբ առանձ-

¹ Տե՛ս՝ „Револуционный восток“, Ленинград, 1933, № 4, стр. 292.

² Ա. Ս. Պուշկին, Ճանապարհորդություն դեպի Արդրում, Երևան, 1937, էջ 39—40.

³ Նույն տեղում, էջ 40.

⁴ Рукою Пушкина, М.—Л. 1935, стр. 872—878.

⁵ Ա. Ս. Գրիբոեդով, Ճանապարհորդական նոթեր, Երևան, 1953, էջ 62.

նապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Լ. Ն. Տոլստոյը։ Այն ժամանակ, երբ ռուսժուռական ռասայական տեսության կողմնակից մի՝ շարք եվրոպացի «գիտնականներ» հրահրում էին այն գաղափարը, թե քուրդ ժողովրդին պիտի կոտորել, ապրելու իրավունքից զրկել, մեծ հումանիստ գրող Լ. Ն. Տոլստոյը իր մարդասիրական ձայնն է հրարձրացնում՝ թե ոչ ոք իրավունք չունի այդ ժողովրդին ոչնչացնելու, քանի որ քուրդը նույնպիսի մարդ է, ինչպես ռուսը, հայը և կամ մի ուրիշ ժողովրդի՝ ներկայացուցիչը։ «...միթե քուրդը մարդ չէ՞», — բացականչում է մեծ մարդասերը։ Առարկելով հայ ռուսժուռադիայի իդեոլոգ Մ. Բերրերյանին, Լ. Նիկոլայեվիչը շարունակում է. «...ըստ իս, նա (քուրդը — Հ. Զ.) նույնպիսի մարդ է, ինչպես մենք Զեդ հետ, և մենք նրան սպանելու իրավունք չունենք, և ոչ մի իրավունք»¹։

Տոլստոյը գտնում էր, որ այդ ժողովրդի համար պիտի ստեղծել հնաբաժնություններ, որպեսզի նա նույնպես կարողանա կուլտուրայես զարգանալ, այնպես, ինչպես ուրիշ ժողովուրդներ։ Հակառակ Բերրերյանի նացիոնալիստական «տեսակետին», թե՛ «...մարդասիրական այդպիսի քաղաք հնարավոր է միայն ...քաղաքակրթված մարդկանց մեջ, բայց ոչ այնպիսի բարբարոսների համար, ինչպիսիք քրդերն են...»², Լև Նիկոլայեվիչը պնդում է՝ «...դուք կտեսնեք, որ նա (քուրդը — Հ. Զ.), կհասկանա, և նույնիսկ ավելի լավ. քան մի բյուրոկրատ կամ թե նույնիսկ, օրինակի համար, մի ավագ պոլիցմեյստր, Վլասովսկի, ես ինքս անձամբ ավելի շուտ հանձն կառնեի գթություն քարոզել քրդին, քան Վլասովսկուն»³։



1920 թվականին, Հայաստանում սովետական կարգերի հաստատումով, մեծ հումանիստ Լ. Ն. Տոլստոյի նկարագրած քուրդ ժողովրդի մի հատվածը նույնպես ազատություն և իրավահավասարություն ստացավ։ Այդ թվականից տնտեսապես, կուլտուրապես հետամնաց քուրդ աշխատավորը մի երեք տասնյակ տարիների ընթացքում դարերի հետամնացությունը իր վրայից թոթափեց և եղբայրական ժողովուրդների հետ միասին մասնակից դարձավ կոմունիզմի վիթխարի կառուցմանը մեր երկրում։ Համատարած անգրագիտության մեջ գտնվող քրդական հին գյուղը դարձավ ամբողջովին գրագետ կոլտոզային գյուղ։

Քրդական նոր տառերով կազմված առաջին այբբենարանի մեջ իրենց արժանավոր տեղը գտան Լ. Ն. Տոլստոյի ռուսական այբբենարանի և մանուկների համար գրած պարզ, իմաստալի, փոքրածավալ առակները, զրույցները, պատմվածքները։ Ներկայումս դժվար թե պատահի գրագետ մի քուրդ աշխատավոր, անկախ տարիքից, որ իր հիշողության մեջ պահած չլինի Տոլստոյի՝ «Երկու ընկեր», «Գարուն», «Մանուկների հրգեհից ազատող շները» և այլ հետաքրքիր ստեղծագործությունները։

Բացի դասագրքերում զետեղված մի շարք գործերից, Լ. Ն. Տոլստոյի

¹ Ю. Веселовский, Беседа с Толстым, տես. «Международный Толстовский альманах», Москва, 1909, стр. 39.

² Նույն տեղում, էջ 39։

³ Նույն տեղում, էջ 39 — 40։

մի քանի ստեղծագործություններ լույս են տեսել նաև առանձին գրքերով և գրանով էլ հարստացրել են քրդական թարգմանական գրականությունը:

1935 թ. լույս տեսավ Տոլստոյի «Պատմվածքներ կենդանիների մասին» ժողովածուն՝ Զասըմե Զալիլի խմբագրությամբ: Այդ գրքում ղեկավարած են մի շարք հետաքրքիր ստեղծագործություններ, ինչպես՝ «Արծրվրձ», «Բուլկան», «Միլիտոնը և Բուլկան», «Նապաստակները», «Ֆասյաններ», «Թոխչա», «Արջի ուսը» և այլն:

Գուրգ ընթերցողների շրջանում մեծ ընդունելություն գտավ Լ. Ն. Տոլստոյի կողմից կրճատված «Թորինզոն» վեպը (հեղինակ Դ. Դեֆո): Այդ հայտնի գրքի թարգմանությունը, որ կատարել է հանգուցյալ քուրդ գրող Զարգոն Դենջոն և լույս է տեսել 1936 թ., ամենահաջողված թարգմանություններից մեկն է մինչև այժմ եղած քրդական թարգմանական գրականության մեջ:

Նույն թվականին Ամինե Ավգալը Տոլստոյի հանրահայտնի «Կովկասի գերին» պատմվածքից մի քանի հատվածներ թարգմանեց և ղեկավարեց «Քրդերեն լեզվի» 4-րդ դասարանի իր դասագրքի մեջ, իսկ հաջորդ՝ 1937 թվականին, այդ պատմվածքը ուսերենից թարգմանեց Խ. Մրադը և լույս ընծայեց առանձին գրքով, որը, որպես մի ամբողջական գործ, նույնպես լայն ընդունելություն գտավ:

Լ. Ն. Տոլստոյի երկերը տարածվել են քուրդ ժողովրդի մեջ նաև բանավոր կերպով: Ներկայումս Տոլստոյի գրվածներից մի քանիսը քուրդ բանաստեղծների մոտ արդեն ստացել են ժողովրդական բանահյուսություն էրանգներ, պատմվում են իրրև բանահյուսության նմուշներ: Հետաքրքիրն այն է, որ հեղինակը՝ Տոլստոյը հաճախ դուրս է բերվում որպես տվյալ ստեղծագործության հերոս: Անցյալ տարի, երբ մենք գրառում էինք ժողովրդական բանահյուսությունը, էջմիածնում բնակվող Ազոն Դալոն, երբ սկսեց պատմել «Կովկասի գերին» (սխալեց Կովկասե), պատմվածքի հերոսի՝ Ժիլինի անվան փոխարեն՝ Տոլստոյի անունը գործածեց: Մեր այն գիտողությունը, թե դա ճիշտ է, ծերունի բանասացը նկատեց, որ ինքն ուրիշ անուն չգիտի, հետևապես ինչպես առել է, այդպես էլ ծախում է, որ նշանակում է թե՛ ինչպես լսել է, այդպես էլ պատմում է:

Հարազատ է Տոլստոյը քուրդ ժողովրդին ոչ միայն քրդերեն թարգմանական գրականության միջոցով, այլև հայերեն և ուսերեն լեզուների միջոցով: Քրդական ընտանիքներում այսօր արդեն կարելի է տեսնել տարբեր լեզուներով հարուստ գրադարաններ և լգրանց մեջ մասնավորապես, վերջին տարիներին Մոսկվայում հրատարակվող Լ. Ն. Տոլստոյի գեղեցիկ ճաշակով կազմված տասնչորս հատորները:

Սովետական բազմազգ ընտանիքում իր երջանիկ կյանքը կերտող քուրդ ժողովուրդն անսահման սիրով շարունակում է ծանոթանալ Լ. Ն. Տոլստոյի անմահ ստեղծագործություններին և օգտագործել հաճախեց մտածողի երկերը իր կուլտուրական վերելքի համար: